# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__2260-Ա___ « 06 » հունիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի Հ.334-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.46/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի լ/ա Սերգեյ Կակոսյանի դիմումը՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Մոնթե Մելքոնյան փողոցի հ.46/4 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին պատկանող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.06.2021թ. հ.15062021-01-0329 վկայականը, Երևան քաղաքի ավագանու 2025թվականի ապրիլի 22-ի հ.334-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների համաձայն՝ քննարկման ներկայացված հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի հ.334-Ա որոշմամբ, Մոնթե Մելքոնյան փողոցի հ.46/4 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին պատկանող՝ 0.006հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերի կատեգորիայից փոխադրվել է «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 27.01.2025թ. հ.Ն/3708-25 եզրակացությունը.

1. Մոնթե Մելքոնյան փողոցի հ.46/4 հասցեում, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ 0.006հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի

հ.334-Ա որոշման համապատասխան, սահմանել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի իսկ գործառնական նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էներգետիկայի օբյեկտների:

2.Ընդունել ի գիտություն, որ.

1) ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի հ.438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:».

2)«Շրջակա միաջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի «բ» ենթակետով և նույն հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված նախատեսվող գործունեությունները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

3.Հողամասի նկատմամբ փոխված նպատակային և գործառնական նշանակություններով իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում՝ համաձայն կից ներկայացվող նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**